Արձանագրություն N 6

Երևանի պետական համալսարանի
2011 թ. հունիսի 2-ի գիտական խորհրդի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 104 անդամներից 79-ը:

Խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց հաստատել հետևյալ օրակարգը.

Օրակարգ.

1. Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում:
(Զեկ.՝ Է. Վ. Չուբարյան, Հ. Լ. Սարգսյան)

2. Տեղեկատվություն ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գործունեության մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Ա. Հ. Սիմոնյան)

3. «Մասնագիտական կրթության որակի ապահովման մարտահրավերները ՀՀ-ում»:
(Զեկ.՝ «ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Վ. Թոփչյան)

4. ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
(Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

5. ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման
կարգի հաստատում: (Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ Ա. Ս. Բուդաղյան)

6. Երևանի պետական համալսարանում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգի հաստատում:
(Զեկ.՝ Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան)

7. «Իրադարձությունները Միջին Արևելքում և դրանց ազդեցությունը համաշխարհային գործընթացների վրա»: (Զեկ.՝ ԵՊՀ Քաղաքակրթական

և մշակութային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Դ. Ա. Հովհաննիսյան)

8. Ընթացիկ հարցեր:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանը հանդես եկավ ներածական խոսքով:

1.1.

Լսեցին. - Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը:

Մրցութային հանձնաժողովների նախագահներ Է. Չուբարյանի և Հ. Սարգսյանի՝ մասնակիցներին ներկայացնելուց հետո թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ:

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

1.	Իսրայելյան Արթուր Հրաչիկի	Դիվանագիտության ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2008/ Է.00.00 – պատմություն
2.	Քոչարյան Հայկ Մկրտիչի	արաբագիտության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2006/ Է.00.02 – ընդհանուր պատմություն
3.	Յավրումյան Մարատ Մնացականի	արաբագիտության ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2006/ Ժ.02.06 - Ասիայի հին և նոր լեզուներ

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

1.	Սահակյան Արթուր Արտուշի	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակ-ի դեկան, ֆունկցիաների տեսության ամբ. պրոֆեսոր	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /1998/ Ա.01.01 – մաթ. անալիզ ավագ գիտաշխատող /1992/
2.	Դալալյան Սամվել Հրանտի	Հանրահաշվի և երկրաչափության ամբ. դոցենտ	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2010/ Ա.01.06 – հանրահաշիվ և թվերի տեսություն դոցենտ /1985/
3.	Մուրադյան Լևոն Խաչիկի	Օպտիկայի ամբ. դոցենտ	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2011/ Ա.04.05 – օպտիկա դոցենտ /2006/
4.	Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի	Մամուլի տեսության և պատմության ամբ. վարիչ	բանասիր. գիտ. դոկտոր /2008/ Ժ.01.06 – ժուռնալիստիկա դոցենտ /2004/
5.	Հարությունյան Սվետլանա Ֆրունզեի	Անձի հոգեբանության ամբ. դոցենտ	հոգեբան. գիտ. դոկտոր /2007/ ԺԹ.00.00 – հոգեբանություն դոցենտ /2004/

Քվեարկությանը մասնակցեցին 79 անդամ:
Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գաբրիելյան Վազգեն – նախագահ
Եզեկյան Լևոն
Սաքապետոյան Ռուբեն
Սարգսյան Ալեքսանդր
Մելքոնյան Նարեկ

Դոցենտի կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Իսրայելյան Արթուր Հրաչիկի – կողմ - 73 , դեմ - 4, անվավեր – 2
2. Քոչարյան Հայկ Սկրտիչի – կողմ - 73, դեմ - 4, անվավեր – 2
3. Յավրումյան Մարատ Մնացականի – կողմ - 71, դեմ - 6, անվավեր – 2

Պրոֆեսորի կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Սահակյան Արթուր Արտուշի – կողմ - 72 , դեմ - 6, անվավեր – 1
2. Դալալյան Սամվել Հրանտի – կողմ - 65, դեմ - 14, անվավեր – 0

3. Մուրադյան Լևոն Խաչիկի – կողմ - 72, դեմ - 6 , անվավեր – 1
4. Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի – կողմ - 72 , դեմ - 6 , անվավեր – 1
5. Հարությունյան Սվետլանա Ֆրունզեի – կողմ - 71, դեմ - 6 , անվավեր – 2

Որոշեցին. –1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:
2. Վերոհիշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:
3. 15 օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել բոհ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ շնորհելու համար:

2. Լսեցին.- Տեղեկատվություն ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գործունեության մասին:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին.- «Մասնագիտական կրթության որակի ապահովման մարտահրավերները ՀՀ-ում»:
(Զեկ.՝ «ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Վ. Թոփչյան)

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

Լսեցին. - ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

Լսեցին. - **ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը» հաստատելու մասին:**

(Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ Ա.Ս. Բուդաղյան)

Որոշեցին.- 1. Հաստատել «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը»՝ ըստ ներկայացված նախագծի:

2. Հանձնարարել ԵՊՀ Ուսումնամեթոդական վարչությանը, ֆակուլտետներին և կրթական կենտրոններին՝

- **2012/2013 ուստարվանից ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերը ենթարկել պարտադիր տարեկան մոնիթորինգի**

(մշտադիտարկման) և իրականացնել դրանց պարբերական վերանայման գործընթաց՝ համաձայն վերոնշյալ կարգի:

Լսեցին. - Երևանի պետական համալսարանում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգի հաստատում:

Որոշեցին.- Երևանի պետական համալսարանում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգի հաստատումը հետաձգել :

Լսեցին.- «Իրադարձությունները Միջին Արևելքում և դրանց ազդեցությունը համաշխարհային գործընթացների վրա»:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

8.1.

Լսեցին . - ԵՊՀ «Ցեղասպանագիտության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման մասին:
(Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- ԵՊՀ կազմում ստեղծել «Ցեղասպանագիտության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

8.2.

Լսեցին . - ԵՊՀ «Ցեղասպանագիտության կենտրոնի» կազմում «Ցեղասպանագիտության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման մասին:
(Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- ԵՊՀ «Ցեղասպանագիտության կենտրոնի» կազմում ստեղծել «Ցեղասպանագիտության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

9.1.

Լսեցին.- ԵՊՀ «Ֆիզիկական մշակումների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման մասին:
(Զեկ.՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Մ. Ավագյան)

Որոշեցին.- ԵՊՀ կազմում ստեղծել «Ֆիզիկական մշակումների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

10.1.

Լսեցին . - ԵՊՀ «Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնը» ՌԴ ակադեմիկոս Ալեքսեյ Նորայրի Սիսակյանի անունով կոչելու մասին:
(Զեկ.՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Մ. Ավագյան)

Որոշեցին.- ԵՊՀ «Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնը» անվանակոչել ԵՊՀ «Ակադեմիկոս Ալեքսեյ Նորայրի Սիսակյանի անվան Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոն»:

11.1.

Լսեցին.- ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոնի տնօրեն Քրիստիան Թութունջյան դը Վարդավանի խմբագրությամբ լույս տեսնող «Եգիպտագիտության առաջընթացները» հանդեսի 2011 թ. 1-ին հատորը /«Advances in Egyptology» Volume 2 (2011)/ տպագրության երաշխավորելու մասին: (Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան, ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոնի տնօրեն Քրիստիան Թութունջյան դը Վարդավան)

Որոշեցին.- ԵՊՀ Եգիպտագիտության հայկական կենտրոնի տնօրեն Քրիստիան Թութունջյան դը Վարդավանի խմբագրությամբ լույս տեսնող «Եգիպտագիտության առաջընթացները» հանդեսի 2011 թ. 1-ին հատորը /«Advances in Egyptology» Volume 2 (2011)/ երաշխավորել տպագրության:

12.1.

Լսեցին.- ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վ. Ռ. Բարսեղյանի «Վարիացիոն հաշիվ» վերտառությամբ աշխատությունը (խնդիրների լուծման ձեռնարկը) իբրև ուսումնական ձեռնարկ հաստատելու և տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի խորհրդի և Մեխանիկայի ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի

մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը պատշաճ գիտական մակարդակով գրված ուսումնական ձեռնարկ է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն՝

1. Դիմել ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտին՝ ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վ. Ռ. Բարսեղյանի «Վարիացիոն հաշիվ» վերտառությամբ աշխատությունը (խնդիրների լուծման ձեռնարկը) իբրև ուսումնական ձեռնարկ հաստատելու միջնորդությամբ:
2. ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վ. Ռ. Բարսեղյանի «Վարիացիոն հաշիվ» վերտառությամբ աշխատությունը (խնդիրների լուծման ձեռնարկը) երաշխավորել տպագրության:

13.1.

Լսեցին.- ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Հ.Հ. Օհնիկյանի և Վ. Ա. Փիլիպոսյանի «Վերլուծական երկրաչափության խնդրագիրք» (1-ին և 2-րդ մասեր) աշխատությունն իբրև ուսումնական ձեռնարկ հաստատելու և տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի խորհրդի և Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը պատշաճ գիտական մակարդակով գրված ուսումնական ձեռնարկ է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն՝

1. Դիմել ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտին՝ ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Հ.Հ. Օհնիկյանի և Վ. Ա. Փիլիպոսյանի «Վերլուծական երկրաչափության խնդրագիրք» (1-ին և 2-րդ մասեր) աշխատությունն իբրև ուսումնական ձեռնարկ հաստատելու միջնորդությամբ:
2. ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Հ.Հ. Օհնիկյանի և Վ. Ա. Փիլիպոսյանի «Վերլուծական երկրաչափության խնդրագիրք» (1-ին և 2-րդ մասեր) վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության: